Ես դայեակ եմ և մայր գթոտ ընտոլընդու,
Որ խնամեմ հպատակներս միշտ հլու։
Կարծեմ գիտցար թէ ես ով եմ, ինձ լսէ.
Մինչեւ հիմայ կերած ապտակդ հերիք է.
Շուտով դարձիր խոնարհամիտ հնազանդ է,
Գուցէ մոռնաս ցաւըրդ, թէպէտ հնար չէ։

# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Մ. Միանսարեանցի տպագրութիւնների գինը այսուհետեւ. Տփխիս (Tiflis), սեպհական տանը, Հայոց Վանքի Մեծ և Փոքր փողոցների անկիւնում, եկեղեցւոյ հանդէպ; Ս. Պետերբուրգ, իւր կայարանում, այսպիսի հասցէով.

—Russie, S.-Pétérsbourg, place Michel, maison № 2—3, de Gerbinne, log № 5, *Michel Miansarof* (Miansariantz) — և Ս. Պետերբուրգէն (ոչ Տփխիսէն) Ռուսաց տէրութեան ամենայն քաղաքները առաքելով, ճանապարհի (փօստայի) ծախսով հանդերձ; Կ. Պօլիս, գրավաճառ Քրիստիան Ռօտհ'ի մօտ, Պերա, Հազզօպուլօի անց (պասսաժ), № 32, —Christian Roth, librairie étrangère, Constantinople, Grand Rue de Pèra, Passage Hazzopulo, № 32.

| | Ռուսիայ. | | Կ. Պօլիս. | |
|---|---|---|---|---|
| | Ր. | Կ. | Ֆր. | Ս. |

Քնար Հայկական, ընդարձակ երգարան հանդերձ զանազան յաւելուածներով, ծանօթութիւններով և հայախօս առածներով (*Lyre arménienne* — recueil des chants). Ս. Պետերբուրգ. 1868, 8-ծալ, էջ 712. Հայկական Քնարի այբբենական ցանկը առանձին տըպած 1870 թ., 8-ծալ, էջ 32, երկուսը միասին,

| | Ր. | Կ. | Ֆր. | Ս. |
|---|---|---|---|---|
| մի օրինակ . . . . . . . . . . | 1 | 30 | 7 | — |
| հինգ օրինակ . . . . . . . . . | 5 | — | 30 | — |

Խնամատարութիւն երեխայոց Komb, —éducation des enfants), — մարմնական և բարոյական, շարադրութիւն Կոմբ'ի, անգղիացւոց թագուհու բժշկի հանդերձ զանազան յաւելուածներով տպագրողի կողմից. Պետերբուրգ. 1868 թ., 8-ծալ, էջ 300.

| | Ր. | Կ. | Ֆր. | Ս. |
|---|---|---|---|---|
| մի օրինակ . . . . . . . . | — | 80 | 4 | — |
| հինգ օրինակ . . . . . . . | 3 | 50 | 14 | — |

Եդուարդ Լաբուլէի Ազգային Կրթութիւն. ա) Ինքնակրթութիւն, բ) ազգային կրթութիւն. գ) մա-

digitised by A.R.A.R.@

| | | Ռուսիայ։ | | Կ. Պոլիս. | |
|---|---|---|---|---|---|
| | | Ռ. | Կ. | Ֆր. | Ս. |

գաւառական գրատուններ։ Պետերբուրգ. 1867 թ., 8-ծալ. էջ 108, հանդերձ յաւելուածով տպագրողի կողմից.

| | | | | |
|---|---|---|---|---|
| մի օրինակ . . . . . . . . . | — | 40 | 2 | — |
| հինգ օրինակ . . . . . . . . | 1 | 50 | 6 | — |

Կանոնաւոր վայելուչ գրութեան պատմութիւնը ու տեսութիւնը (l'histoire et la théorie de la salligraphie), հանդերձ զանազան ծանօթութիւններով, յաւելուածներով և գրասեղանների ու անատոմիկական տուերագրերով 8-ծալ, էջ 274։ Ս. Պետերբուրգ։ 1872 թ.

| | | | | |
|---|---|---|---|---|
| մի օրինակ . . . . . . . . | 1 | 70 | 7 | — |
| հինգ օրինակ . . . . . . . | 7 | 50 | 30 | — |

Հայկական կանոնաւոր և վայելուչ գրութիւն (գաղափարներ, օրինակներ) սեւ մելանով տպած (calligraphie arménienne)։ Լայպցիգ։ 1872 թ., 4-ծալ, 5½ թերթ, էջ 24, հանդերձ զանազան տուերագրերով և պատկերներով.

| | | | | |
|---|---|---|---|---|
| մի օրինակը Տիֆլիս և Պետերբուրգ . . | — | 60 | 2 | — |
| չորս օրինակը Պետերբուրգէն ուղարկելով Ռուսաստանի միւս քաղաքները . . | 2 | 40 | 8 | — |

Հայերէն կանոնաւոր և վայելուչ գրութեան վարժութիւններ (Exercice de la calligraphie arménienne) № № 1, 2, 3, 4, և 5, գունաւոր մելանով տպած, որ, գրել յառաջ սկսողները կամ վատ գրողները, տպածի վերայ սեւ թանաքով գրելով, դիւրութեամբ (հեշտութեամբ) վարժուին կանոնաւոր և վայելուչ գրելուն։

Այս պատճառաւ մենք այս տեղ № № 1, 2, 3, 4, և 5, վարժութիւններին այն գինը ենք նշանակում, որոնք արժեն Պետերբուրգ. Տիֆլիս և Կ. Պոլիս; իսկ Պետերբուրգէն մեր հայրենակից ուղարկները այս վարժութիւնները տանել տալ խնդրողները պէտք է աւելցնեն ճանապարհի ծախսը, փոստային ֆունտին 30 կոպէկ, ամեն մի հարիւր ամբողջ թերթը հինգ ֆունտ հաշուելով։ Բայց առաւել լաւ կ՚անեն գործակալների միջնորդութեամբ ստանալը, ինչպէս գրքի 120 երեսին յիշել ենք և որը փոստայից երկու անգամ աժան է լինելու.

Վարժութիւն (exercice) № 1, սկզբնական խազեր՝ մեծ 4-ծալ կէս թերթ, չորս երեսից բաղկացած.

| | | | | |
|---|---|---|---|---|
| հարիւր (100) օրինակը . . . | 2 | — | 8 | — |
| հինգ (500) հարիւրը . . . . | 10 | — | 40 | — |

Վարժութիւն (exercicd) № 2. այբբենը և բառեր, մեծաձեւ, երեսները կամ 24 երես.

| | | | | |
|---|---|---|---|---|
| Հարիւրը (100) . . . . . . | 12 | — | 48 | — |
| Հինգ հարիւրը (500) . . . . | 60 | — | 240 | — |

digitised by A.R.A.R.@

| | Ռուսիոյ : | | Կ. Պոլիս : | |
|---|---|---|---|---|
| | Ր. | Կ. | Ֆր. | Ս. |
| Վարժութիւն (exercice) № 3, գլխագրերը մեծ և միջին ձեւ, կէս 4-ծալ թերթ, չորս երես. | | | | |
| Հարիւր (100) օրինակը . . . | 2 | — | 8 | — |
| Հինգ հարիւր (500) օրինակը . . | 10 | — | 40 | — |
| Վարժութիւն (exercice) № 4, այբբենը և բառեր միջին ձեւի մեծութեան տառերով. մի թերթ կամ 8 երես. | | | | |
| Հարիւրը (100) . . . . . . . | 4 | — | 16 | — |
| Հինգ հարիւրը (500) . . . . | 20 | — | 80 | — |
| Վարժութիւն (exercice) № 5, առանձին պարբերութիւններ և փոքրիկ հատուածներ մանր տառերով տպած և թուանշաններ, կէս թերթ կամ 4 երես. | | | | |
| Հարիւրը (100) . . . . . . . | 2 | — | 8 | — |
| Հինգ հարիւրը (500) . . . . | 10 | — | 40 | — |
| Հայերէն կանոնաւոր և վայելուչ գրութեան տողացանկեր (transparent) № № 1, 2, 3, և 4, գունաւոր կարմրագոյն հաստ մեծ թերթի վերայ, սեւ թանաքով տպած, չորս երես. | | | | |
| 25 օրինակը . . . . . . . . | 2 | 50 | 10 | — |
| 50 օրինակը . . . . . . . . | 4 | 50 | 18 | — |

## ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Պատուեա՛ զՏէր 'ի քոյոց արդար վաստակոց: Առակ. Գ. 9.

Զաղաքաւոր միջոցներ կան, որք առիթ կուտան բարեպաշտ հոգւոյն առ Աստուած ունեցած սիրոյն նշանը արտայայտելու: Աստուածպաշտութիւնը կը թելադրէ զմարդ, որ Աստուծմէ ընդունած պարգեւներուն զԱստուած փառաւորէ: Այսու զգացմամբ իւրաքանչիւր անձն կարող է յանուն Աստուծոյ շատ տեսակ առաքինական գործքեր ընել. ինչպէս՝ աղքատները կերակրել, անկելոց օգնել, հասարակաց օգտակար ծառայութիւններ ընել, և այլն: Այս ամենը կ'ընէ մարդ չը խնայելով իւր հանճարը, իւր զօրութիւնը, իւր աշխատութիւնը, և իւր ստացուածքը, զորս ընդունած է Աստուծմէ և կը պարտի Աստուծոյ. Երբ՝ եթէ մէկը այսպիսի զոհողութիւններ կ'ընէ Աստուծոյ համար, կը պատուէ նա զԱստուած իւր արդար վաստակներով: Այս կարգէն է զանազան նուիրատուութիւնք և յիշատակք զորս Աստուծոյ կը նուիրէ բարեպաշտ հոգին իւր կայքէն կամ բաժնէն իւր ստացուածքներէն:

Այս օրերս մեր Եգիպտաբնակ ազգայիններէն մեծաշուք Գէորգ պէյ Սափայեան Աստուածսիրութենէ շարժեալ՝ կամելով իւր արուեստին, աշխատութեան և բա-

digitised by A.R.A.R.@